դառնալով պիտի ձեռներն անպատճառ լվանային, պարզ է՝ ննջեցյալի հետ ունեցած շփումով մահվան վարակը իրենց հետ տուն բերած չլինելու և դրանով նրա վերադարձը չդյուրացնելու համար. նրա հետ ամեն նյութական, առարկայական կապը կտրած լինելու համար։ Այժմս էլ որպես վերապրուկ բոլոր հայկական շրջաններում հուղարկավորության մասնակիցները գերեզմանատնից տուն վերադառնալով նախ և առաջ լվանում են ձեռները, բայց արդեն լոկ որպես ադաթ՝ չկապելով բնավ դրա հետ որևէ սնոտի մտայնություն։ Եթե ննջեցյալը շարունակ երևում էր տանեցոց երազում, գնում էին գերեզմանատուն և նրա գերեզմանի մեջ, այնտեղ, որտեղ ենթադրվում էր թե նրա սիրտն է, ցցում էին սուր փայտե ցից։ Սիրտը խողխողելով պիտի վերջ տրվեր նրա կարոտին, վերջնականապես նա հանգիստ առներ և թաղած տեղից այլևս չգար, չշրջեր և տանեցոց չայցելեր։ Հարազատների մոտ վերադառնալու փորձը ննջեցյալի համար դժվարացնելու մոգական միջոցառումներից մեկը պետք է համարել նաև այն սովորությունը, որով պահանջվում էր, որ նաժը թե՛ տանից վերցնելիս, թե՛ եկեղեցուց հանելիս և թե՛ մինչև գերեզմանատուն ճանապարհին հանգիստ տալուց և գանձ ասելուց հետո տեղից բարձրացնելիս, ինչպես և գերեզմանի մոտ գետնին իջեցնելիս երեք անգամ վերցնեին և իջեցնեին գետին, կարծես այդ տեղերի հետ ննջեցյալին ամուր կապելու, այդ տեղերին նրան մեխելու, ցցելու նպատակով։ Թույլ չէր տրվում տնից մինչև եկեղեցի հանգիստ տալ, իսկ եկեղեցուց մինչև գերեզմանատուն պետք էր երեք անգամ հանգիստ տրվեր։ Դրանով նախ հանգուցյալը գամվում էր իր գերեզմանին և ապա նրան ցույց էր տրվում այն ուղղությունը, որով պիտի գնար, եթե ուզենար տուն վերադառնալ, այն կետերը, որտեղ նա կարող էր կանգ առնել գերեզմանից դեպի եկեղեցի, իսկ եկեղեցուց տուն ճանապարհը կտրվում էր։ Այդտեղ ոչ մի կանգ, իսկ եթե տուն հասավ, պիտի մնար այնտեղ, որտեղ դրված էր եղել նաժը և տան այլ մասերը չշրջեր և մուտքը չգտներ։ Նույնիսկ հանգիստներին գանձ ասելը արդյո՞ք մի այլ մոգական միջոց չէր այդ կետերում վերադարձող հանգուցյալին ավելի երկար պահելու համար, այդտեղ գանձ գտնելու հուսով։ Տանը և տնից եկեղեցի փոխադրելիս ճանապարհին թե՛ հանգիստ չէին տալիս և թե՛ գանձ չէին ասում։ Արդյո՞ք նույնպես ամեն անգամ եկեղեցուց դեպի գերեզմանատունը տանելիս գանձ ասելուց հետո քահանային մի կոպեկ որպես «գանձուց» տալը նորից մի միջոց չէ՞ր կոնկրետ ձևով շեշտելու, որ այդ կանգերին գանձ կա թաղված և ահա նրանից հանգուցյալի համար մի բաժին է հանվում։ Այդ դրամը այդտեղ որոնելի գանձերի մի մասը չէ՞։

Հնում ննջեցյալը նույն օրն և եթ հանձնվում էր հողին կամ տանից տեղափոխվում էր եկեղեցի և հաջորդ օրը թաղվում, պատարագով կամ առանց պատարագի։ Գիշերը չէին թողնում տանը, երևի այն մտայնությամբ, որ չար ոգիները գիշերը արթուն մնալով կարող են նրան վնասել։ Հոգին ավանդած կամ դիակը լվացած տեղում վառում էին մոմ կամ ճրագ, բայց ոչ նավթի։ Լույսը անմար պահում էին յոթ օր։ Երբ հարուստները սկսեցին իրենց ննջեցյալին տանը պահել, երբեմն նույնիսկ մի քանի օր, դագաղի սնարքի և ոտքերի մոտ անպատճառ պիտի մնային վառված մոմեր կամ ճրագներ։

Ամեն ջանք թափում էին, որ ննջեցյալը լուսի մեջ լինի։ Մոմեր, ճրագներ էին վառվում ոչ թե նրան տաքացնելու համար, ինչպես բացատրում է